

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), առաջնորդվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, իր լիազորությունների իրացման շրջանակում կոռուպցիայի կանխարգելումն առավել արդյունավետ և հասցեական դարձնելու նպատակով՝ 2021 թվականից ի վեր իրականացնում է հանրային համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում: Հանձնաժողովի՝ 2025 թվականի մարտի 20-ի N 02-Լ որոշմամբ հաստատվել է Հանձնաժողովի՝ անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման 2025 թվականի պլանը: [Մշտադիտարկումն](#) իրականացվել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային ցուցիչների հիման վրա՝ նախապես հաստատած հանրային մարմինների/պաշտոնների շրջանում:

ՆՊԱՏԱԿ

Մշտադիտարկումը նպատակ է ունեցել հայտարարատու պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերի վերլուծության և Հանձնաժողովին հասանելի պետական տեղեկատվական շտեմարանների, ինչպես նաև բաց աղբյուրների տվյալների համադրության միջոցով դուրս բերել մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող անձանց անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումները, վերլուծել խախտումների բնույթը և հնարավոր պատճառները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ համանման խախտումների հետագա կանխարգելման ուղղությամբ: Գործընթացը միտված է նաև հանրային ծառայության ընդհանուր համակարգում բարեվարքության վիճակի, ինչպես նաև օրենսդրությամբ

սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկվածության աստիճանի գնահատմանը և Հանձնաժողովի գործունեության շրջանակներում ի հայտ եկած խնդիրների հասցեագրմանը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Մշտադիտարկման իրականացման համար հիմք են ծառայել Հանձնաժողովի՝ Օրենքով սահմանված լիազորությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից գործնականում վերհանված ոլորտային ռիսկերը: Մասնավորապես, Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովին, կանխարգելման մանդատի շրջանակներում, տրվել է լիազորություն՝ հետևելու, ի թիվս այլ պաշտոնների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը:

Ի լրումն նշվածի՝ Հայաստանի Հանրապետությունը կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ստանձնել է միջազգային պարտավորություններ. մասնավորապես, Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման [5-րդ փուլի շրջանակներում](#) դիտարկվել է բարձրագույն գործադիր մարմիններում և իրավապահ մարմիններում բարեվարքության խթանումը և կոռուպցիայի կանխարգելումը, որի համատեքստում՝ 2024 թվականի մարտին հաստատվել է Հայաստանի գնահատման զեկույցը՝ պետությանը ներկայացնելով համապատասխան հանձնարարականներ՝ նշված սուբյեկտային կազմի բարեվարքության խթանման ուղղությամբ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովի կողմից 2025 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային պաշտոններ սահմանվել են **ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և վերջիններիս տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները**: Հարկ է նկատել, որ պաշտոնների և վերջիններիս գործառույթների ռիսկայնությունը գնահատելիս ԳՐԵԿՈ-ի կողմից, ի թիվս այլնի, հիմք են ընդունվել վերջիններիս՝ կառավարման համակարգում ունեցած կարգավիճակը, նշանակման գործընթացը, որոշումների կայացման առանձնահատկությունները, վարձատրության կարգը և այլ հանգամանքներ:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից 2025 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային խումբ սահմանվել են ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և նրանց տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները (սահմանված է Մշտադիտարկման պլանի հավելվածով)¹ ընդհանուր թվով **պետական պաշտոն զբաղեցնող 114 անձ (փաստացի 114 անձ)**¹:

ՌԻՍԿԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Հաշվի առնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար անհամատեղելիության պահանջների պահպանման օրենսդրությամբ սահմանված պահանջները և հատկապես, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով սահմանված՝ այլ պաշտոններ զբաղեցնելու և այլ գործունեություն իրականացնելու սահմանափակումները՝ Հանձնաժողովը, որպես ռիսկային ցուցիչներ, ընդունել է հետևյալը.

1. բաժնային արժեթղթերի առկայությունը,
2. մեկից ավելի աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրությունը,
3. մասնակցությունն առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում,
4. ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում,
5. պաշտոնատար անձի բաժնեմասի հավատարմագրային կառավարման վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,

¹ Ներկայացված թիվն արտացոլում է նաև մշտադիտարկման ժամանակահատվածում պաշտոնավարման դադարեցման, ինչպես նաև պաշտոնի ստանձնման դեպքերը:

6. անհատ ձեռնարկատեր հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվությունը,
7. կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոնի զբաղեցումը,
8. պաշտոնատար անձանց կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կամ ներկայացվածությամբ առևտրային կազմակերպությունների առկայության դեպքում դրանց՝ պետական գնումների գործընթացներին մասնակցությունը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Մշտադիտարկումն իրականացվել է չորս փուլով.

1. տվյալների հավաքագրում,
2. տվյալների ուսումնասիրություն,
3. տվյալների գնահատում և ամփոփում,
4. արդյունքների հրապարակայնության ապահովում:

1. Տվյալների հավաքագրում

Տվյալների հավաքագրումն իրականացվել է Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարաններում, բաց աղբյուրներում, մեդիա հրապարակումներում, ինչպես նաև հայտարարագրերի համակարգում առկա վերաբերելի տեղեկությունների հավաքագրման միջոցով՝ ընդհանուր excel ձևաթղթում:

Տվյալների հավաքագրման փուլում պաշտոնատար անձանցից, այլ գերատեսչություններից հայցվել են վերաբերելի տեղեկություններ և/կամ պարզաբանումներ: Պաշտոնատար անձի վերաբերյալ տվյալների հավաքագրումը համարվել է ավարտված, երբ առերևույթ խախտումը հաստատելու կամ խախտման բացակայությունն ապացուցելու համար անհրաժեշտ բոլոր նյութերն ապահովված են եղել:

2. Տվյալների ուսումնասիրություն

Հավաքագրված տվյալների ուսումնասիրությունն իրականացվել է տվյալների համակողմանի վերլուծության, դրանց համադրման միջոցով:

Տվյալների ուսումնասիրությունը սկսվել է Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարաններից ստացված տեղեկությունների ուսումնասիրությունից՝ արդյունքները համադրելով նաև մեդիա հրապարակումների և բաց աղբյուրներում առկա տեղեկությունների հետ: Ըստ անհրաժեշտության՝ ուսումնասիրվել են նաև պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ: Ուսումնասիրություններն իրականացվել են միևնույն տեխնիկական և եզրույթային ձևակերպումների միջոցով՝ աշխատանքի միասնականությունն ապահովելու նպատակով:

3. Տվյալների գնահատում/ամփոփում

Ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները վերլուծվել են՝ առերևույթ խախտման հիմքերը գնահատելու նպատակով: Մշտադիտարկումը սահմանված ժամկետում իրականացնելու նպատակով՝ բոլոր անձանց վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել են և ներկայացվել Հանձնաժողովի նիստերում:

4. Հրապարակայնության ապահովում

Մշտադիտարկման գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ Մշտադիտարկման պլանը և գործընթացի մանրամասները հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ <https://shorturl.at/5ltRY>:

Մշտադիտարկման ամփոփումը ևս ենթակա է հրապարակման:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ

ԳՐԵԿՈՒ-ի գնահատող խմբի կողմից Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույցով Հայաստանին կոչ է արվել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը ներկայացնել հաշվետվություն՝ ԳՐԵԿՈՒ-ի առաջարկություններին ի պատասխան ձեռնարկված գործողությունների մասին: Ըստ այդմ, հիմք ընդունելով սահմանված ժամկետը՝ անհամատեղելիության պահանջների մշտադիտարկումը մեկնարկել է 2025 թվականի մարտի 21-ից:

Միաժամանակ, հիմք ընդունելով մշտադիտարկման ենթարկվող պաշտոնների՝ մշտադիտարկման մեկնարկից հետո ընթացիկ համալրման դեպքերը, Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություններ նորանշանակ սուբյեկտների վերաբերյալ: Ուսումնասիրության փաստացի ժամանակահատվածը 2025 թվականի մարտի 21-ից մինչև օգոստոսի 1-ն է:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2025 թվականի դեկտեմբերին Մշտադիտարկման արդյունքում 114 պետական պաշտոն զբաղեցնող անձի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններն ամբողջությամբ ավարտվել են, և արդյունքներն ամփոփվել են:

Բաց աղբյուրներից և տեղեկատվական շտեմարաններից ստացված տվյալները հաստատելու/ամբողջացնելու նպատակով կատարվել են հարցումներ Պետական եկամուտների կոմիտե, Կենտրոնական դեպոզիտարիա, առևտրային բանկեր, ինչպես նաև պարզաբանումներ են հայցվել ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանցից: Ուսումնասիրության առանցքային արձանագրումները՝ ըստ ոլորտների, ներկայացվում են ստորև.

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերը՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում վերջիններիս հնարավոր մասնակցությունը կամ

գործադիր մարմնում ներկայացվածությունը պարզելու նպատակով: Միաժամանակ, ուսումնասիրվել են վերջիններիս ընտանիքի անդամների՝ առևտրային կազմակերպություններում բաժնեմաս ունենալու վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված անձանց և կազմակերպությունների՝ պետական կամ համայնքային գնումների գործընթացների մասնակցության դեպքերը: *Արդյունքում արձանագրվել է, որ՝*

- **114** պաշտոնատար անձանցից **20**-ի (կամ շուրջ 17,5 տոկոսի) հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձինք՝ ընտանիքի անդամները, զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ (ունեն գործող առևտրային կազմակերպություններում մասնակցություն կամ ներկայացված են դրանց կառավարման մարմիններում, կամ հաշվառված են որպես անհատ ձեռնարկատեր):

Առևտրային կազմակերպություններում մասնակցության և/կամ ներկայացվածության վերաբերյալ բերված վիճակագրությունը վերաբերել է վարչապետի, փոխվարչապետի, վարչապետի 1 խորհրդականի, փոխվարչապետի 2 խորհրդականի, 2 նախարարի, նախարարի 4 տեղակալի, նախարարի 9 խորհրդականի:


- **3** դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը մասնակցել են հանրային գնումների գործընթացների, որոնցից 1 դեպքում պատվիրատու է հանդիսացել մարզպետարանը, մյուս 2 դեպքում՝ տարբեր համայնքներ: Միաժամանակ, այն մարմինները, որտեղ մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող անձինք զբաղեցնում են պաշտոն, չեն հանդիսացել գնման գործընթացի պատվիրատու, հետևապես, շահերի բախման առերևույթ խախտման դեպքեր սույն հիմքով չեն արձանագրվել: Մշտադիտարկման արդյունքում շահերի բախման իրավակարգավորումների առերևույթ խախտման այլ հատկանիշներ ևս դուրս չեն բերվել:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերի և Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ՝

- 114 պաշտոնատար անձանցից 78-ը (կամ շուրջ 68.4 %-ը) երբևէ չեն ունեցել մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային կազմակերպություններում:
- 114 պաշտոնատար անձանցից 36-ը (կամ շուրջ 31.6 %-ը) տարբեր ժամանակահատվածներում մասնակցություն կամ ներկայացվածություն են ունեցել/ունեն առևտրային կազմակերպություններում կամ հաշվառված են եղել/հաշվառված են որպես անհատ ձեռնարկատեր (հետևյալ համամասնությամբ՝ վարչապետ, 2 փոխվարչապետեր, վարչապետի 2 խորհրդականներ, 3 նախարարներ, նախարարների 19 տեղակալներ, նախարարների 9 խորհրդականներ):

Պաշտոնատար անձանց մասնակցությունը/ներկայացվածությունը
առևտրային կազմակերպություններում



- Հանձնաժողովն իր ուսումնասիրությունների, այդ թվում՝ իրավասու մարմիններից հարցումների արդյունքում ստացած տեղեկատվության հաշվառմամբ, 35 կազմակերպությունների և ԱԶ-ների դեպքում արձանագրել է, որ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից նախքան պաշտոնի ստանձնումը կամ պաշտոնը ստանձնելուց հետո օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետում առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցությունը կամ այդ կազմակերպությունների կառավարման մարմիններում ներկայացվածությունը, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց գործունեությունը դադարեցվել են: Իրականացված հարցումները, մասնավորապես, վերաբերել են կազմակերպությունների փաստացի իրացման շրջանառությանը, ինչպես նաև անձանց պաշտոններին և պաշտոնավարման ժամկետներին:
- Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանցից ընդհանուր թվով **հինգը** պաշտոնավարման ընթացքում **փաստացի ունեցել են մասնակցություն գործող առևտրային կազմակերպություններում**: Բոլոր այն դեպքերում, երբ առևտրային կազմակերպությունները եղել են փաստացի գործող, Հանձնաժողովը հավելյալ գնահատման է արժանացրել հավատարմագրային կառավարման պահանջների պահպանումը:
- Արդյունքում արձանագրվել է, որ մեկ դեպքում պաշտոնատար անձի բաժնեմասն օրենքի պահանջներին համապատասխան հանձնված է եղել հավատարմագրային կառավարման: Երկրորդ դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձի բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնվել օրենքով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները չբավարարող անձի, Հանձնաժողովն, այդուհանդերձ, համակողմանի ուսումնասիրության արդյունքում որոշել է վարույթ չհարուցել՝ հիմք ընդունելով ուսումնասիրության շրջանակներում պաշտոնատար անձի կողմից ներկայացված հիմնավորումները, որոնց գնահատմամբ փաստվել է, որ անձը փաստացի չի մասնակցել կազմակերպության կառավարմանը, ինչպես նաև ուսումնասիրության փուլում արդեն իսկ ձեռնարկել է անհամատեղելիության պահանջների խախտման վերացմանն ուղված անհրաժեշտ քայլեր՝ ապահովելով բաժնեմասի

հավատարմագրային կառավարման փոխանցումը օրենքով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները բավարարող անձի: Երրորդ դեպքում ևս պաշտոնատար անձի կողմից բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնվել օրենքով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները չբավարարող անձի, ինչի հիմքով Հանձնաժողովը որոշել է նախաձեռնել համապատասխան վարույթ՝ պայմանավորված համապատասխան հիմքերի առկայությամբ: Չորրորդ դեպքում առևտրային կազմակերպություններում մասնակցություն ունեցող մեկ այլ պաշտոնատար անձի կողմից իր ունեցած բաժնեմասն ընկերություններից մեկի դեպքում հավատարմագրային կառավարման է հանձնվել օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, իսկ երկրորդ ընկերության կանոնադրական կապիտալում վերջինիս պատկանող բաժնեմասը հավատարմագրային կառավարման առհասարակ հանձնված չի եղել: Սույն դեպքով Հանձնաժողովը հարուցել է համապատասխան վարույթ: Հինգերորդ դեպքում պաշտոնատար անձի բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման հանձնված չի եղել: Հանձնաժողովը ուսումնասիրության շրջանակներում պարզաբանում է հայցել պաշտոնատար անձից: Վարույթի հարուցման հիմքերը ենթակա են հավելյալ գնահատման՝ համապատասխան պարզաբանումների ստացումից հետո, որը սույն ամփոփման հրապարակման օրվա դրությամբ դեռ չի ստացվել:

1. Այսպես, Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ներքին գործերի նախարարի տեղակալ Կ. Յուզուլյանը, 2024 թվականի դեկտեմբերի 13-ից զբաղեցնելով պաշտոնը, պաշտոնավարմանը զուգահեռ շարունակել է մասնակցություն ունենալ «ԿԵՆՑԱՂՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊ ընկերությունում: Հանձնաժողովն ուսումնասիրության շրջանակներում պարզել է, որ վերջինիս բաժնեմասն օրենքով սահմանված կարգով 2017 թվականի հուլիսի 5-ից հանձնված է հավատարմագրային կառավարման:

2. Երկրորդ դեպքում Հանձնաժողովն Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Է. Զաքարյանի վերաբերյալ իրականացրած ուսումնասիրության շրջանակներում պարզել է, որ վերջինս, 2024 թվականի նոյեմբերի 1-ից զբաղեցնելով պաշտոնը,

պաշտոնավարմանը զուգահեռ շարունակել է մասնակցություն ունենալ «ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲ ընկերությունում: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ընկերությունում ունեցած բաժնեմասը Է. Զաքարյանը հավատարմագրային կառավարման է հանձնել հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները չբավարարող անձի: Հանձնաժողովն, իրականացնելով համակողմանի ուսումնասիրության, որոշել է վարույթ չհարուցել՝ հիմք ընդունելով այն, որ ուսումնասիրության շրջանակներում Է. Զաքարյանի կողմից ներկայացվել են հիմնավորումները, որոնց գնահատմամբ փաստվել է, որ վերջինս փաստացի չի մասնակցել կազմակերպության կառավարմանը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրության փուլում ձեռնարկել է անհամատեղելիության պահանջների խախտման վերացմանն ուղված անհրաժեշտ քայլեր՝ ապահովելով բաժնեմասի հավատարմագրային կառավարման փոխանցումը օրենքով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները բավարարող անձի:

3. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական Կ. Սարգսյանը, 2021 թվականի ապրիլի 28-ից զբաղեցնելով պաշտոնը, պաշտոնավարմանը զուգահեռ շարունակել է փաստացի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ ունենալով բաժնեմասնակցություն երկու առևտրային կազմակերպություններում՝ «ԷԼ-ԿԱՍ» ՍՊ և «ՀԱՅՌՈՒՍԿՈԳԵՆԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերություններում: «ԷԼ-ԿԱՍ» ՍՊ ընկերությունում ունեցած բաժնեմասը Կ. Սարգսյանը հավատարմագրային կառավարման է հանձնել պաշտոնը ստանձնելուց շուրջ 5 ամիս անց՝ 2021 թվականի սեպտեմբերի 25-ին, իսկ «ՀԱՅՌՈՒՍԿՈԳԵՆԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերությունում ունեցած բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնված չի եղել: Հանձնաժողովը «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով սույն թվականի օգոստոսի 4-ին հարուցել է վարույթ, որը եզրափակվել է Հանձնաժողովի՝ սույն թվականի նոյեմբերի 3-ին

ընդունած՝ խախտման առկայության վերաբերյալ եզրակացությամբ²: Հանձնաժողովը, քննության առնելով խախտման դեպքը և պաշտոնատար անձի ներկայացրած պարզաբանումները, եզրակացրել է, որ Կ. Սարգսյանի կողմից «ԷԼ-ԿԱՍ» ՍՊ ընկերության բաժնեմասը սահմանված ժամկետում չի հանձնվել հավատարմագրային կառավարման, այնուամենայնիվ, անհամատեղելիության պահանջների նպատակային մեկնաբանման տեսանկյունից նշվածն ունեցել է նվազ նշանակություն՝ հաշվի առնելով, որ ըստ վարույթի մասնակցի, իր կողմից օրենքով նախատեսված անհրաժեշտ գործողությունները կատարվել են օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրազեկվելուց հետո ողջամիտ ժամկետում, ինչպես նաև մինչև քննարկվող վարույթի հարուցումը վերջինիս բաժնեմասն արդեն իսկ օտարված է եղել: Միաժամանակ, առկա փաստական տվյալների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ երկրորդ՝ «ՀԱՅՌՈՒՍԿՈԳԵՆԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերությունը 2021-2025 թվականների ընթացքում հանդիսացել է գործող ընկերություն, ունեցել իրացման շրջանառություն, իսկ Կ. Սարգսյանը, հանդիսանալով ընկերության տնօրենների խորհրդի անդամ, հեռավար քվեարկությամբ մասնակցել է խորհրդի նիստերին և բաժնետերերի ընդհանուր ժողովներին՝ այսպիսով ունենալով մասնակցություն նաև ընկերության կառավարմանը: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը գտել է, որ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդականի կողմից «ՀԱՅՌՈՒՍԿՈԳԵՆԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության գործունեությանը ներգրավվածությունը պարունակել է շահերի բախման ռիսկ՝ հաշվի առնելով նախարարության և ընկերության գործունեության շրջանակները: Հանձնաժողովը եզրակացրել է, որ Կ. Սարգսյանի կողմից խախտվել են հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները: Հանձնաժողովը եզրակացությամբ դիմել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ խնդրելով օրենքով սահմանված կարգով քննարկման առնել Կ. Սարգսյանի լիազորությունների դադարեցման հարցը:

² Տե՛ս՝ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/11/00-25.pdf>:

4. Չորրորդ դեպքում Հանձնաժողովը ՀՀ վարչապետի խորհրդական Վ. Դումանյանի վերաբերյալ իրականացրած ուսումնասիրության շրջանակներում պարզել է, որ վերջինս, 2025 թվականի ապրիլի 30-ից զբաղեցնելով ՀՀ վարչապետի խորհրդականի պետական հայեցողական պաշտոնը, իսկ մինչ այդ՝ 2023 թվականի փետրվարի 2-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը՝ ՀՀ նախագահի խորհրդականի պաշտոնը, պաշտոնավարմանը զուգահեռ ունեցել է մասնակցություն (1.1539 %) «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալում, որը նախորդ պաշտոնավարման ժամանակ՝ 2023 թվականի փետրվարի 15-ին, երեք տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնել ֆիզիկական անձ-կառավարչի՝ Աշոտ Սամվելի Մանուկյանին: Հանձնաժողովն արձանագրել է, որ թեև Վ. Դումանյանի կողմից բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնվել դեռևս նախորդ պաշտոնում պաշտոնավարման ընթացքում, այնուամենայնիվ, «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ այդ պահին գործող կարգավորումների պայմաններում ևս վերջինս թույլ է տրվել 31-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված պահանջի առերևույթ խախտում: Հանձնաժողովը Վ. Դումանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով սույն թվականի հոկտեմբերի 1-ին հարուցել է վարույթ: Հանձնաժողովը քննության առնելով խախտման դեպքը և պաշտոնատար անձի ներկայացրած պարզաբանումները, արձանագրել է, որ Վ. Դումանյանի կողմից «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասը ֆիզիկական անձ կառավարչի կառավարման հանձնելը թեև ձևական առումով պարունակում է խախտման հատկանիշներ, այդուհանդերձ, վերաբերելի նորմերի նպատակային մեկնաբանման տեսանկյունից ունի նվազ նշանակություն՝ նկատի ունենալով այն, որ վերջինիս բաժնեմասնակցության չափը եղել է ընդամենը 1,1539%, Վ. Դումանյանը 2023-2025 թվականների ընթացքում ընկերությունից որևէ շահաբաժին չի ստացել, ինչպես նաև բաժնեմասն օտարվել է, ինչի արդյունքում, ըստ էության, առկա չի եղել ընկերության գործունեության և կառավարման

նկատմամբ ազդեցության հնարավորություն: Հանձնաժողովի եզրակացությունը ենթակա է հրապարակման առաջիկայում:

5. Հինգերորդ դեպքում Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Առողջապահության նախարար Ա. Ավանեսյանը, 2021 թվականի հունվարի 18-ից զբաղեցնելով պաշտոնը, պաշտոնավարմանը զուգահեռ շարունակել է մասնակցություն ունենալ «Աբովյան 39» ՍՊ ընկերությունում: Պաշտոնը ստանձնելուց հետո վերջինս իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը: 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 20-ը ընկերության բաժնեմասի կառավարման այլ պայմանագիր չի ներկայացվել, և միայն 2025 թվականի սեպտեմբերի 20-ին կնքվել է բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին նոր պայմանագիր: Հանձնաժողովն ուսումնասիրության շրջանակներում պարզաբանում է հայցել Ա. Ավանեսյանից: Վարույթի հարուցման հիմքերը ենթակա են գնահատման՝ համապատասխան պարզաբանման ստացումից հետո: Դեկտեմբերի 28-ի դրությամբ պարզաբանում դեռ չի ստացվել:

3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ (...): Նույն հոդվածի 8-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ֆոնդային բորսայում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալը՝ նույն ընկերության կանոնադրական կապիտալում առավելագույնը մեկ տոկոս մասնակցության շրջանակներում: Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է նաև պաշտոն զբաղեցնող անձանց առևտրային արժեթղթեր ունենալու հանգամանքը և առկայության դեպքում դրանց սահմանաչափերը:

Հանձնաժողովը բոլոր սուբյեկտների վերաբերյալ համապատասխան հարցումներ է ուղարկել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից փոխանցված տվյալները համադրվել են պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրված տվյալների հետ, հաշվարկվել է վերջիններիս ունեցած արժեթղթերի՝ համապատասխան ընկերությունների կանոնադրական կապիտալի նկատմամբ տոկոսային հարաբերակցությունը:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ 114 պաշտոնատար անձից 4-ը պաշտոնավարման ընթացքում տիրապետել են բաժնային կամ պարտքային արժեթղթերի: Մասնավորապես, պաշտոնատար 3 անձ ունեցել է պարտատոմսեր, մեկ անձ՝ ցուցակված ընկերության՝ առևտրի թույլատրված բաժնային արժեթղթեր: Առևտրի թույլատրված արժեթղթերի քանակը չի գերազանցել օրենքով սահմանված թույլատրելի շեմը: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ 1 պաշտոնատար անձ 2024 թվականի իր տարեկան հայտարարագրում չի հայտարարագրել օտարված արժեթղթերից ստացված եկամուտը, ինչի շրջանակներում իրականացվել են Հանձնաժողովի լիազորություններից բխող գործընթացներ:

4. ԱՅԼ ՎՃԱՐՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել է այլ վճարովի աշխատանք կատարելու արգելք՝ բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի իրականացման: Հաշվի առնելով սույն կարգավորումը՝ մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նաև նախարարի տեղակալի պաշտոն զբաղեցնող 4 անձի և նախարարի խորհրդականի պաշտոն զբաղեցնող 3 անձի կողմից այլ աշխատանք կատարելու, ինչպես նաև այլ աշխատանքի դիմաց վարձատրության ստացման վերաբերյալ տվյալները՝ մասնավորապես՝ վերջիններիս կողմից 2024 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրած այլ եկամուտները և Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների վերաբերելի տվյալները: Առանձին դեպքերում տեղեկատվություն է հայցվել նաև մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանցից: Նշվածի համատեքստում հարցումներ են կատարվել 7

պաշտոնատար անձի: Ուսումնասիրության շրջանակում ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ 3 անձի դեպքում ստացած եկամուտը եղել է կրթական աշխատանքի համար ստացված վարձատրություն, 2 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձինք պաշտոնավարմանը զուգահեռ զբաղվում են գիտական աշխատանքով, 1 դեպքում՝ այլ վճարովի աշխատանքի դիմաց հայտարարագրված եկամուտը հանդիսացել է անձի նախկին աշխատավայրից ստացած վարձատրությունը:

Միաժամանակ, ուսումնասիրության շրջանակներում արձանագրվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող այլ վճարովի աշխատանք կատարելու հիմքով անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման 1 դեպք: Հանձնաժողովն արձանագրել է, որ 2020 թվականի մայիսի 11-ից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդականի պաշտոնը զբաղեցնող Ա. Աբգարյանը 2019 թվականի սեպտեմբերի 23-ից զբաղեցրել է նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտորի՝ ներառական կրթության գծով օգնականի պաշտոնը: Հանձնաժողովն արձանագրել է, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդականի պաշտոնը հանդիսանում է հանրային պաշտոն, հետևապես, վերջինիս նկատմամբ կիրառելի են վերը նշված օրենքի 31-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջները: Հանձնաժողովը, համադրելով Ա. Աբգարյանի՝ կոնսերվատորիայի ռեկտորի՝ ներառական կրթության գծով օգնականի աշխատանքային գործառույթները օրենքի իմաստով գիտական և կրթական աշխատանքի շրջանակի հետ, արձանագրել է, որ վերջինս իրականացնում է վարչական-ադմինիստրատիվ գործառույթներ, որոնք օրենքի իմաստով չեն կարող համատեղելի դիտվել հանրային պաշտոնի հետ: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը սույն թվականի օգոստոսի 4-ին որոշել է Ա. Աբգարյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցել վարույթ: Վարույթի իրականացման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Ա. Աբգարյանի՝ նախարարի խորհրդականի լիազորությունները դադարեցվել են 2025 թվականի օգոստոսի 26-ին: Նշվածի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտել է, որ սույն գործով Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերացել է՝ հաշվի առնելով

եզրակացության կայացման պահին անձի կողմից հանրային պաշտոնից ազատված լինելու հանգամանքը: Սույն թվականի նոյեմբերի 3-ին Հանձնաժողովը որոշել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական Ա. Աբգարյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 4-ին հարուցված թիվ 07/2025-Ա/Վ վարույթը կարճել:

5. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ԶՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ

ԱՅԼ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրության առարկա է դարձրել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոնների զբաղեցման հանգամանքը, որի արդյունքում համատեղությամբ այլ պաշտոն զբաղեցնելու որևէ դեպք չի արձանագրվել:

6. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մշտադիտարկման շրջանակներում, ի թիվս անհամատեղելիության պահանջներին առնչվող խախտումների, արձանագրվել են պաշտոնատար անձանց կողմից, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների կողմից հայտարարագրմանը ներկայացվող պահանջների խախտման դեպքեր, մասնավորապես՝ հայտարարագրման ենթակա տվյալների չհայտարարագրման կամ թերի հայտարարագրման, որոշ դեպքերում՝ հայտարարագրերի չներկայացման դրսևորումներով:

Հանձնաժողովի կողմից ընդհանուր 26 անձանց նկատմամբ (պաշտոնատար անձ և ընտանիքի անդամներ) իրականացված գործընթացների արդյունքում պարզվել է՝

1. Առկա է եղել պաշտոնատար անձանց կամ նրանց ընտանիքի անդամների կողմից հայտարարագրերի չներկայացման 10 դեպք, ինչի առնչությամբ հետագա վարչարարություն չի նախաձեռնվել, քանի որ գրավոր ծանուցմամբ տրամադրված 30-օրյա ժամկետում պահանջվող հայտարարագրերը ներկայացվել են,

2.1 դեպքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ՝ հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու հիմքով: Նախաձեռնված վարույթն ավարտվել է արարքի նվազ նշանակություն ունենալու հիմքով բանավոր դիտողություն հայտարարելով և գործի վարույթը կարճելով: Արարքի՝ նվազ նշանակության որակման համար Հանձնաժողովը հաշվի է առել վարույթի ընթացքում ձեռքբերված փաստական տվյալներն առ այն, որ պաշտոնատար անձի կողմից իր ընտանիք անդամի տվյալները չհայտարարագրելը չի հանգեցրել այդ նորմով պաշտպանվող հարաբերության էական խաթարման, քանի որ մինչև վարույթի ավարտը համապատասխան հայտարարագրերը ներկայացվել են, իսկ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից գույքային դրության վրա ազդեցություն ունեցող՝ հայտարարագրման ենթակա տվյալներ առկա չեն եղել,

3.2 դեպքով հայցվել են պարզաբանումներ, որոնք գնահատման փուլում են,

4.2 դեպքով ստուգումն ավարտվել է՝ հայտարարագրված տվյալների անհամապատասխանության բացակայության հիմքով,

5.14 դեպքով ստուգումներն ավարտվել են և հայտարարատուներին առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումներ: Վարչական վարույթների չհարուցումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ որոշ դեպքերում լրացած են եղել վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները, իսկ ժամկետի՝ լրացած չլինելու դեպքերում՝ առկա են եղել Հանձնաժողովի նախադեպային որոշումներով իրավախախտման նվազ նշանակության հիմքեր: Մասնավորապես՝ շահերի

հայտարարագրում համապատասխան տվյալները լրացված չեն եղել, սակայն արժեթղթերի առկայության մասին տվյալները հայտարարագրված են եղել անձանց գույքի հայտարարագրերում, կամ ընտանիքի անդամի ներկայացվածությունը հայտարարագրված չի եղել պաշտոնատար անձի շահերի հայտարարագրում, սակայն նույն կազմակերպությունից ստացված եկամուտները հայտարարագրված են եղել ընտանիքի անդամի հայտարարագրում և այլն: